100 անհայտ հերոսուհի չարժեր

աշխարհակալներ

Սիրտ

100 HISTORIAS DE MUJERES EXTRAORDINARIAS

AMELIA EARHART · MIRIAM · CLEOPATRAS · MARIA CALLAS · SIMONE BILES · RUTH BADER GINSBURG · NINA SIMONE · CHANEL · JANE AUSTEN · LOZEN · ELIZABETH I · SERENA WILLIAMS · MARIE CURIE

Լինում է, չի լինում, մի արքայադուստր է լինում: Ի՞նչ: Արքայադուստր: Ժամանակին մի աղջնակ կար, ով ուզում էր հասնել Մարս: Կար մի կին, ով դարձավ աշխարհի լավագույն թենիսիստներից մեկը, կար նաև մի կին, ով հայտնաբերեց, թե ինչպես է թիթեռների մետամորֆոզն առաջանում:

Ֆրիդա Կալոյից մինչև Ջեյն Գուդոլ, Կոկո Շանելից մինչև Նինա Սիմոն, Բրոնտե քույրերից մինչև Մարի Կյուրի: Այս գիրքը պատմում է 100 համարձակ կանանց արտառոց կյանքի մասին և ներկայացնում է աշխարհի տարբեր անկյուններից, 60 նկարիչների նկարազարդումներ:

Գիտնականներ, տիեզերագնացներ, ծանրամարտիկներ, դատավորներ, խոհարարներ ... Վճռականության ու հանդգնության հարյուր օրինակ՝ մեծ երազողների համար:

ԷԼԵՆԱ ՖԱՎԻՅԻ ԵՎ ՖՐԱՆՍԵՍԿԱ ԿԱՎԱՅՈ

ՑԱԾԵԼՈՒՅՇ ՊԵՔԱՍՊԵՐ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԱՂՋԱՑԵՐԻ ՀԱՄԱՐ

100 պատմություններ, 100 յուրահատուկ կանանց մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ադա Լավլեյս - Լիլիթ Սարիբեկյան
Ալեք Վեկ - Անի Հարությունյան
Ալֆոնսինա Ստրադա - Վիկտորիա Անի Միկայիլ
Ալիսիա Ալոնսո - Գոհար Մավյան
Ամնա ալ Հադդադ - Սյուզի Մարտիրոսյան
Աննա Պոլիտկովսկայա - Քնարիկ Հակոբյան
Արտեմիզիա Ջենտիլեսկի - Սյուզի Մարտիրոսյան
Բալկիսա Չիբոու - Մարիա Մովսիսյան
Բոենդա Չապման - Նազելի Տեր-Պետրոսյան
Բրոնտե Քույրեր - Ինգա Բաբայան
Եկատերինա II - Մելինե Մարտիրոսյան
Չոլիտաներով Լեռնագնացուհիները - Մելինե Մարտիրոսյան
Կոկո Շանել - Մարիա Մովսիսյան
Կոռա Կոռալինա - Լիլիթ Սարիբեկյան
Եֆրոսինա Քրուզ - Մարիա Մովսիսյան
Էվիտա Պերոն - Մարիա Մովսիսյան
Ֆլորենս Նայթինգեյլ - Մարիա Մովսիսյան
Ֆրիդա Կալո - Սվետլանա Ասատրյան
Գրեյս Օմելլի - Լիլիթ Սարիբեկյան
Հարիեթ Թաբմեն - Մարիա Մովսիսյան
Հաթշեփսուտ - Մարիա Մովսիսյան
Հելլեն Քելլեր - Մարիա Մովսիսյան
Հիլարի Քլինթոն - Մարիա Մովսիսյան
Հիպատիա - Ռաիսա Աբդալովա
Էլիզաբեթ I - Ռաիսա Աբդալովա
Ջեյն Օսթին - Մարիա Մովսիսյան
Ջեյն Գուդոլլ - Սվետլանա Ասատրյան
Ջեսիկա ՈՒոթսոն - Մարիա Մովսիսյան
Ջիլ Թերթեր - Վիկտորիա Անի Միկայիլ
Ջինգու - Մարիա Մովսիսյան
Ջուլիա Չայլդ - Վերա Նարիմանյան
Մեյ Ջեմիսոն - Մարիա Մովսիսյան
Մալալա Յուսուֆզայ - Մարիա Մովսիսյան
Մանալ ալ-Շարիֆ - Մանե Մազմանդյան
Մարգարետ Թեթչեր - Մարիա Մովսիսյան
Մարիա Կալլաս - Սվետլանա Ասատրյան
Մարիա Մոնտեսորի - Մարիա Մովսիսյան
Մարիա Սիբելլա Մերիան - Մարիա Մովսիսյան
Մերի Կոմ - Սվետլանա Ասատրյան
Մայա Անջելու - Մարիա Մովսիսյան
Միշել Օբամա - Մարիա Մովսիսյան
Միրիամ Մակեբա - Սվետլանա Ասատրյան
Վիրջինիա Վուլֆ - Վերա Նարիմանյան

ԱԴԱ ԼԱՎԼԵՅՍ

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ

Ժամանակին Ադա անունով մի աղջիկ կար, որը շատ էր սիրում մեքենաներ:

Նրան հետաքրքրում էր նաև թռչելու գաղափարը:

Նա ուսումնասիրել է շատ թռչունների՝ պարզելու թռչունների չափի ճշգրիտ հավասարակշռությունը, թևերն ու մարմնի քաշը: Նա փորձարկել է տարբեր նյութեր և պատրաստել բազմաթիվ նմուշներ:

Ադան երբեք չկարողացավ թռչնի պես թռչել, բայց ստեղծեց գեղեցիկ պատկերագիրք, որը կոչվում է Վուելոլոգիա, այնտեղ նա գրել է իր բոլոր հայտնագործությունները:

Մի գիշեր, Ադան մասնակցեց մի պարահանդեսի, որտեղ հանդիպեց մի ծեր մաթեմատիկոսի՝ Չարլզ Բեբբիջին:

Նա նույնպես փայլուն մաթեմատիկոս էր, նրանք շուտով լավ ընկերներ դարձան: Չարլզը Ադային հրավիրում է տեսնելու իր հնարած մեքենան: Այն կոչվում էր դիֆերենցիալ մեքենա, և կարող էր թվեր գումարել և հանել:

Ոչ ոք երբևէ նման բան չէր արել:

Ադան հիացած էր:

-Ի՞նչ կլինի, եթե մենք մեքենա ստեղծենք, որն ավելի բարդ հաշվարկներ կկատարի:

-Դու՞ :

Երկուսն էլ գործի անցան: Նրանք շատ հուզված էին:

Մեքենան հսկայական էր , անհրաժեշտ էր հսկայական գոլորշու շարժիչ:

Չնայած այս ամենին, Ադան ուզում էր ավելի առաջ գնալ:

-Ի՞նչ կլինի, եթե մենք կարողանանք այս մեքենային կարգադրել, որ նվագի երաժշտություն, ցուցադրի տառեր և թվեր:

Այն, ինչ նկարագրում էր Ադան, համակարգիչ էր: Դա եղել է մինչև ժամանակակից համակարգիչների գյուտը:

1815թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 - 1852թ.-ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 27

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ILUSTRACIÓN DE
ELISABETTA STOINICH
ESTE CEREBRO MÍO
ES MÁS QUE MERAMENTE MORTAL,
COMO EL TIEMPO LO DEMOSTRARÁ.
ADA LOVELACE

ԱԼԵՔ ՎԵԿ

ՍՈՒՊԵՐՄՈԴԵԼ

Ժամանակին Ալեք անունով մի աղջիկ կար, որ միշտ դպրոցից տուն վերադառնալիս կանգ էր առնում ծառի մոտ՝ մանգո ուտելու: Ալեքի գյուղում խմելու ջուր և էլեկտրաէներգիա չկար: Նրանք ստիպված էին քայլել դեպի ջրհորը՝ ջուր խմելու համար, բայց Ալեքն ու իր ընտանիքը պարզ ու զվարթ կյանք էին վարում: Դժբախտաբար, մի օր սարսափելի պատերազմ սկսվեց, և Ալեքի կյանքը ընդմիշտ փոխվեց: Նա և իր ընտանիքը ստիպված էին փախչել հակամարտությունից՝ բարձր ազդանշանների ձայների ներքո, որոնք հնչում էին ամբողջ գյուղում: Անձրևների շրջան էր: Գետը վարարել էր, կամուրջներն անցել էին ջրի տակ: Մարդիկ խորտակվում էին, իսկ Ալեքը լողալ չգիտեր: Նա վախենում էր խորտակվելուց, բայց մայրն օգնեց նրան գետն անվտանգ անցնելու: Ճանապարհին Ալեքի մայրիկը աղի տոպրակները փոխանակում էր սննդի և անձնագրերի հետ, քանի որ նրանք փող չունեին: Ժամանակի ընթացքում նրանք կարողացան փախչել պատերազմից և ապաստան գտան Լոնդոնում: Մի օր, երբ Ալեքը զբոսնում էր այգում, նրան մոտեցավ տաղանդներ փնտրող մի տղամարդ՝ հայտնի մոդելային գործակալությունից: Ալեքին ուզում էր աշխատանքի վերցնել, որպես մոդել, բայց նրա մայրիկը համաձայն չէր: Սակայն գործակալը համառեց այնքան, մինչև վերջապես Ալեքի մայրիկը համաձայնեց: Ալեքն այնքան էր տարբերվում մյուս մոդելներից, որ անմիջապես դարձավ սենսացիա: Ալեքը աշխարհի բոլոր աղջիկների համար ուղերձ ունի.

-Դու գեղեցիկ ես: Նորմալ է տարբերվող լինելը: Նորմալ է ամաչկոտ լինելը: Պետք չէ լինել այնպիսին, ինչպիսին բոլորն են:

ԾՆՎԵԼ Է 1977Թ.-Ի ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ
ՍՈՒԴԱՆ


ILUSTRACIÓN DE
BIJOU KARMAN
CUANDO LA BELLEZA BRILLA
DESDE EL INTERIOR,
NO HAY FORMA DE NEGARLA.
ALEK WEK

ԱԼՖՈՆՍԻՆԱ ՍՏՐԱԴԱ

ՀԵԾԱՆՎՈՐԴՈՒՀԻ

Մի ժամանակ կար մի աղջիկ, որը հեծանիվն այնքան արագ էր քշում, որ անցնելիս նրան հազիվ էիր տեսնում:

– Զգույշ եղիր, Ալֆոնսինա՛, – բղավեցին մի անգամ նրա ծնողները: Բայց արդեն ուշ էր, որովհետև նրանց լսելու համար արդեն հեռու էր: Երբ ամուսնացավ, նրա ընտանիքը հույս ուներ, որ պրոֆեսիոնալ հեծանվորդ դառնալու խենթ միտքը վերջապես կթողնի: Այնուամենայնիվ, հարսանիքի օրը ամուսինը նրան նոր հեծանիվ նվիրեց: Հետո նրանք տեղափոխվեցին Միլան, որտեղ Ալֆոնսինան սկսեց պրոֆեսիոնալ պարապել: Նա այնքան արագշարժ էր և այնքան ուժեղ, որ մի քանի տարի անց մասնակցեց Giro d'Italia-ին՝ աշխարհում ամենադժվար մրցույթներից մեկին: Ոչ մի ուրիշ կին դա առաջ երբեք չէր փորձել:

– Նա չի կարողանա, –ասացին մարդիկ: Բայց նրան կանգնեցնել հնարավոր չէր:

Երկար և հոգնեցուցիչ մրցույթ էր, քսանմեկ օրյա փուլերով՝ աշխարհի ամենաթեք լեռնային ճանապարհների վրա: Այն իննսուն հեծանվորդներից, ովքեր սկսեցին մրցույթը, միայն երեսունն անցան վերջնագիծը: Եվ Ալֆոնսինան նրանցից մեկն էր: Նրան ընդունեցին որպես հերոսուհի: Ցավոք, հաջորդ տարի նրան արգելեցին մասնակցել:

– Giro d'Italia-ն տղամարդկանց մրցույթ է, – հայտարարեցին կազմակերպիչները:

Բայց դա նույնպես չկանգնեցրեց Ալֆոնսինային: Նա ձև գտավ մասնակցելու և արագության ռեկորդ սահմանեց, որը չգերազանցված մնաց քսանվեց տարի, չնայած որ քսան ֆունտանոց ու մեկ արագությամբ հեծանիվ էր վարում: Ալֆոնսինան ուրախ կլիներ իմանալու, որ դրանից հետո շատ բան է փոխվել: Այժմ կանանց հեծանվավազքը շատ տարածված է: Այն նույնիսկ օլիմպիական մարզաձև է:

1891թ.-Ի ՄԱՐՏԻ 16 - 1959թ.-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13

ԻՏԱԼԻԱ

ILUSTRACIÓN DE
CRISTINA PORTOLANO
NADIE PUEDE DETENER
MI BICICLETA.
ALFONSINA STRADA

ԱԼԻՍԻԱ ԱԼՈՆՍՈ

ՊԱՐՈՒՀԻ

Ժամանակին կար մի կույր աղջիկ, որ դարձավ հայտնի պարուհի: Նրա անունը Ալիսիա էր: Իր մանկության տարիներին Ալիսիան կարողանում էր տեսնել, և նա արդեն բացառիկ պարուհի էր: Ալիսային մեծ կարիերա էր սպասվում, երբ հիվանդացավ: Նրա տեսողությունը ժամանակի հետ վատանում էր: Նա ստիպված էր ամիսներ անցկացնել անկողնում՝ առանց տեղից շարժվելու, բայց նա կարիք ուներ պարելու, ուստի դա արեց հնարավոր միակ ճանապարհով:
«Պարում էի գլխիս մեջ: Չկարողանալով տեսնել, չկարողանալով տեղաշարժվել, անկողնում գամված՝ ես ինձ սովորեցրեցի պարել «Ժիզել»: Մի օր Նյու Յորքի բալետի պրիմա-պարուհին վնասվածք ստացավ, և նրան փոխարինելու համար կանչեցին Ալիսիային: Նա արդեն կորցրել էր տեսողությունը, բայց ինչպե՞ս կարող էր «ոչ» ասել: Բացի այդ, բալետը, որը նա պետք է պարեր, «Ժիզելն» էր լինելու: Հենց նա սկսեց պարել, հանդիսատեսը սիրահարվեց նրան: Նա պարում էր մեծ շնորհով և վստահությամբ, չնայած գրեթե կույր էր: Նա իր պարուհի գործընկերներին սովորեցրեց սպասել իրեն ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին: Նրա ոճն այնքան յուրահատուկ էր, որ նրան հրավիրեցին պարել հյուրախաղերի ժամանակ՝ շրջելով ամբողջ աշխարհով: Բայց նրա երազանքն էր բալետը բերել Կուբա՝ իր հայրենի երկիր: Երբ վերադառնում էր իր ճանապարհորդություններից, դասական բալետ էր դասավանդում կուբացի պարողներին, շուտով ստեղծեց «Ալիսիա Ալոնսո» բալետային ընկերությունը, որը հետագայում դարձավ Կուբայի ազգային բալետը:

ԾՆՎԵԼ Է 1921Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ
ԿՈՒԲԱ


ILUSTRACIÓN DE
ANA JUAN
UNA BUENA BAILARINA
DEBE APRENDER DE
TODAS LAS ARTES.
ALICIA ALONSO

ԱՄՆԱԱԼ ՀԱԴԴԱԴ

ԾԱՆՐՈՐԴՈՒՀԻ

Ժամանակին Ամնա անունով մի լրագրող կար, որը երջանիկ չէր: Ամնան ավելորդ քաշ ուներ և ֆիզիկական լավ վիճակում չէր: Մի օր նա ինքն իրեն ասաց. «Ավելի լավ բան կարող ես անել: Պարզապես ինչ-որ բան արա: Դուրս արի քայլելու»: Եվ նա արեց դա: Ամնան վայելում էր իր զբոսանքները, և ուզեց մեկ այլ բանով ևս զբաղվել: Նա սկսեց վազել ավելի երկար տարածություններ: Կարճ մրցարշավներ կատարեց: Նա սկսեց մարզվել մարզադահլիճում և երբ հայտնաբերեց ծանրամարտը, հասկացավ, որ դա իր երազած մարզաձևն է: Ամնայի կյանքը փոխվեց, երբ ծանրամարտի միջազգային ֆեդերացիան, որը կարգավորում է ծանրամարտը ամբողջ աշխարհում, թույլ տվեց մահմեդական կանանց մասնակցել ունիտարդոյով և հիջաբով: Այնուհետև Ամնան սկսեց մրցել Եվրոպայում և Ամերիկայում և դարձավ կուռք աշխարհի բոլոր մահմեդական աղջիկների համար:

-Ես սիրում եմ ուժեղ լինել, — ասում է Ամնան: Կին լինել՝ չի նշանակում, որ դու չես կարող տղամարդու պես ուժեղ լինել, կամ նույնիսկ ավելի ուժեղ լինել:

Նա այնքան է սիրում ծանրաձող բարձրացնել, որ մարզվեց նաև Ռիո դե Ժանեյրոյի Օլիմպիական խաղերին մեկնելու համար: Ամնան կարծում է, որ մենք բոլորս պետք է գտնենք մեզ դուր եկած մարզաձևը և զբաղվենք դրանով:

-Ձեր տարիքը, դավանանքը կամ էթնիկական ծագումը նշանակություն չունի: Սպորտը լավ է բոլորի համար: Սպորտը ստեղծում է խաղաղություն և միավորում է ազգերին: Անկախ նրանից, թե որոնք են մարտահրավերները, երբեք մի՛ հեռացեք ձեր երազանքներից: Որքան շատ դիմադրեք, այնքան կմոտենաք ձեր նպատակներին: Եթե գործը դժվարանում է, ապա դրանից ավելի համառ եղեք:

ԾՆՎԵԼ Է 1989Թ.-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ILUSTRACIÓN DE
ELINE VAN DAM
NADIE TIENE DERECHO
A DECIRME QUÉ PUEDO LOGRAR
O QUÉ NO PUEDO LOGRAR.
AMNA AL HADDAD

ԱՆՆԱ ՊՈԼԻՏԿՈՎՍԿԱՅԱ

ԼՐԱԳՐՈՂՈՒՀԻ

Շատ վաղուց Ռուսաստանում արգելված էին որոշ գրքեր: Դրանցից ոմանք գրվել էին հեղինակներ կողմից, որոնց սիրում էր Աննա անունով մի փոքրիկ աղջիկ: Ուստի Աննայի ծնողները գաղտնի բերում էին նրա սիրած գրքերը՝ նրա սիրտը ուրախացնելու համար: Աննան մեծացավ և դարձավ լրագրող: Երբ Ռուսաստանի մի տարածաշրջան, որն կոչվում էր Չեչնիա, ցանկանում էր առանձնանալ և դառնալ անկախ պետություն, Ռուսաստանի կառավարությունը զորքեր ուղարկեց՝ այդ ամենը կասեցնելու համար: Դաժան պատերազմ սկսվեց, և Աննան որոշեց, որ պետք է գրի այդ մասին: Նա ստիպված էր աշխարհին պատմել, թե իրականում ինչ է կատարվում Չեչնիայում: Բայց Ռուսաստանի կառավարությանը այդ ամենը բոլորովին դուր չեկավ:

-Ինչո՞ւ ես քո կյանքը վտանգի տակ դնում, –մի անգամ հարցրեց նրանամուսինը:

- Ռիսկը իմ մասնագիտության մի մասն է, – պատասխանեց նա: -Ես գիտեմ, որ ինձ հետ հնարավոր է՝ ինչ-որ բան պատահի: Ես պարզապես ուզում եմ, որ իմ հոդվածները օգնեն կառուցել ավելի լավ աշխարհ: Բազմաթիվ վատ իրադարձություններ տեղի ունեցան, սակայն Աննան միշտ համարձակ էր: Նա մի անգամ ստիպված էր ամբողջ գիշեր վազել Չեչնիայի բլուրներով՝ Ռուսաստանի անվտանգության ուժերից ազատվելու համար: Երկու կողմից մարդիկ փորձում էին խանգարել նրան ճշմարտությունն ասել, և ինչ-որ մեկը նույնիսկ փորձեց ազատվել նրանից՝ թեյի մեջ թույն լցնելով: Չնայած այդ վտանգներին՝ նա համարձակորեն առաջ շարժվեց՝ բացահայտելով ամեն օր իր տեսած իրեղեն ճշմարտությունը: Աննան մինչև մահը շարունակում էր վտանգել իր կյանքը, և նա միշտ հետևում էր ճշմարտությանը, որպեսզի կարողանա օգնի կառուցել ավելի լավ աշխարհ:

1958թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 30 - 2006թ.-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7

ՌՈՒՍԱՍՏԱՆ


ILUSTRACIÓN DE
LEA HEINRICH
LO IMPORTANTE ES LA
INFORMACIÓN, NO LO QUE
PENSEMOS SOBRE ELLA.
ANNA POLITKOVSKAYA

ԱՐՏԵՄԻԶԻԱ ՋԵՆՏԻԼԵՍԿԻ

ՆԿԱՐՉՈՒՀԻ

Ժամանակին կար մի աղջիկ, որ զարմանալի նկարչուհի էր: Նրա անունը Արտեմիզիա էր, և նա գեղեցիկ և ուժեղ աղջիկ էր: Նրա հայրիկը՝ Օրացիոն, նույնպես նկարիչ էր և շատ փոքր տարիքից սովորեցնում էր դստերը նկարել իր արհեստանոցում: Տասնյոթ տարեկանում Արտեմիզիան արդեն նկարել էր մի քանի գլուխգործոցներ: Այնուամենայնիվ, մարդիկ կասկածում էին նրան: «Ինչպե՞ս կարող է նա այդպես նկարել», – շշնջում էին նրանք իրար: Այդ ժամանակաշրջանում շատ քիչ կանայք կարող էին մուտք գործել հայտնի նկարիչների արվեստանոցներ: Մի օր Օրացիոն խնդրեց իր ընկերոջը՝ հայտնի նկարիչ Ագոստինո Տասիին, որ Արտեմիզիային դասեր տա հեռանկարի մասին և թե ինչպես ստեղծել եռաչափ տարածքներ հարթ մակերեսի վրա: Ագոստինոն ուզում էր, որ իր աշակերտուհին նաև լիներ իր սիրեցյալը: «Խոստանում եմ ամուսնանալ քեզ հետ», – ասում էր նա, բայց Արտեմիզիան նրան միշտ պատասխանում էր՝ ոչ: Բանն այնքան բարդացավ, որ Արտեմիզիան հայտնեց իր հորը, թե ինչ է կատարվում: Օրազիոն հավատաց իր դստերը և, չնայած Ագոստինոն ազդեցիկ մարդ էր և վտանգավոր թշնամի, նա նկարիչին դատի տվեց: Դատավարության ընթացքում Ագոստինոն հերքեց, որ վատ արարք է գործել: Արտեմիզիան մեծ ճնշման ենթարկվեց, բայց նա հավատարիմ մնաց ճշմարտությանը և չհուսահատվեց: Ի վերջո Ագոստինոն մեղավոր ճանաչվեց, և այսօր Արտեմիզիան համարվում է բոլոր ժամանակների մեծագույն նկաչուհիներից մեկը:

1593Թ.-Ի ՀՈՒԼԻՍԻ 8 - 1653Թ.-Ի ՀՈՒՆԻՍԻ 14

ԻՏԱԼԻԱ

ILUSTRACIÓN DE
MÓNICA GARWOOD
MIENTRAS VIVA,
TENDRÉ CONTROL
SOBRE MI PROPIO SER.
ARTEMISIA GENTILESCHI

ԲՌԵՆԴԱ ՉԱՊՄԱՆ

ԱՆԻՄԱՏՈՐ

Ժամանակին կարմիր գանգուր մազերով մի աղջիկ կար, ով սիրում էր նկարել: Նրա անունը Բռենդա էր:

Երբ տասնհինգ տարեկան էր, Բռենդան կապ հաստատեց Ուոլթ Դիսնեյի ստուդիայի հետ:

-Ես շատ լավ նկարչուհի եմ,- ասաց, -ինձ աշխատանք կտա՞ք:

Նրան պատասխանեցին, որ թող կրկին կապ հաստատի իրենց հետ, երբ ավելի մեծ լինի և ավելի շատ փորձ ունենա:

Եվ դա հենց այն է, ինչ նա արեց: Բռենդան սովորեց կերպարների անիմացիա Կալիֆորնիայի արվեստի համալսարանում և մի քանի տարի հետո հասավ իր կյանքի երազանքին՝ աշխատել Դիսնեյի մուլտֆիլմների վրա Լոս Անջելեսում: Շուտով նա բացահայտեց, որ ընկերության քիչ կին անիմատորներից մեկն է:

-Այդ ժամանակ ես հասկացա, թե ինչու են Դիսնեյի արքայադուստրները այդքան անօգնական. նրանց բոլորին ստեղծել են տղամարդիկ,- հիշում է Բռենդան: - Ինքս ինձ խոսք տվեցի ստեղծել մի նոր տեսակի արքայադուստր՝ ուժեղ, ինքնուրույն և □□□ «խիզախ», մտածեցի՝ ի՛նչ լավ անուն է մուլտֆիլմի համար:

«Խիզախ արքայադստեր» Մերիդա արքայադուստրը ամեն ինչ է՝ բացի անօգնականից: Նա հրաշալի նիզակակիր է, քշում է իր ձին, կռվում է արջերի դեմ և ունենում անհավանական արկածներ: Բռենդան կերպարը ստեղծեց իր փոքրիկ դստեր՝ Էմմայի օրինակով, որն ուժեղ և ազատ ոգով աղջիկ է, ճիշտ ինչպես նրա մայրիկը:

-Նա իմ Մերիդան է. Ես նրան շատ եմ սիրում:

Բռենդան Օսկարի և Ոսկե Գլոբուսի արժանացավ իր ֆիլմի համար: Նա նաև աշխատել է բազմաթիվ այլ մրցանակակիր մուլտֆիլմների վրա, ինչպիսին են «Հրեշն ու Գեղեցկուհին», «Զրահարսը», «Առյուծ արքան»: Բռենդան առաջին կինն է, որ եղել է Հոլիվուդի առաջին մուլտֆիլմներից մեկի՝ Եգիպտոսի արքայազնի ռեժիսորը:

ԾՆՎԵԼ Է 1962Թ.-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ILUSTRACIÓN DE
T.S. ABE

EMPECÉ A DIBUJAR
DESDE QUE ERA NIÑA, Y
QUERÍA TENER UNA CARRERA
QUE IMPLICARA DIBUJAR.
BRENDA CHARMAN

ԲՐՈՆՏԵ ՔՈՒՅՐԵՐ

ԳՐՈՂՆԵՐ

Անգլիայի հյուսիսում գտնվող մի ցուրտ և մռայլ տանը, ապրել են երեք քույրեր: Շառլոթը, Էմիլին և Էննին շատ ժամանակ էին անցկացնում միայնակ և գրում պատմվածքներ և բանաստեղծություններ՝ զվարճանքի համար:

Մի օր Շառլոթը որոշեց իր տեքստերն ուղարկել մի հայտնի անգլիացի բանաստեղծի՝ հարցնելու նրա կարծիքը: Նրա պատասխանը եղավ. «Ինձ բացարձակ դուր չեն գալիս ձեր բանաստեղծությունները: Գրականությունը տղամարդկանց համար է»:

Բայց Շառլոթը չդադարեց գրել:

Մի գիշեր նա գտավ իր քրոջ՝ Էմիլիի տետրը՝ դրված նրա գրասեղանի վրա:

— Ինչո՞ւ երբեք մեզ ցույց չես տվել քո բանաստեղծությունները,— հարցրեց նրան Շառլոթը,— նրանք այնքան գեղեցիկ են:

Էմիլին շատ զայրացավ, երբ իմացավ, որ քույրն առանց իր թույլտվության կարդացել է իր անձնական տեքստերը: Սակայն երբ հանգստացավ, Շառլոթը նրան մի առաջարկ արեց.

- Ինչու՞ միասին բանաստեղծությունների մի գիրք չգրենք:

Էմիլին և Էննին համաձայնեցին: Երբ վերջապես հրապարակվեց նրանց գիրքը, վաճառվեց գրքի ընդամենը երկու օրինակ: Բայց նրանք չհանձնվեցին և շարունակեցին թաքուն գրել, իսկ միջօրեին քննարկում էին իրենց տեքստերը:

Այս անգամ նրանցից յուրաքանչյուրը աշխատեց առանձին նովելի վրա: Երբ նովելները հրապարակվեցին, ունեցան ակնթարթային հաջողություն: Իրենց ժամանակաշրջանի մարդիկ չէին կարողանում հավատալ, որ այդ նովելները գրված էին երեք երիտասարդ աղջիկների կողմից: Դրա համար էլ քույրերը գնացին Լոնդոն, որպեսզի ցույց տային, որ իրենք են նովելների օրինական հեղինակները:

Նրանց գրքերը թարգմանվել են շատ լեզուներով և կարդացվել միլիոնավոր մարդկանց կողմից ամբողջ աշխարհում:

ՄՈՏ 1816Թ.-ԻՑ - 1855Թ.

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ILUSTRACIÓN DE
ELISABETTA STOINICH
NO SOY UN ÁNGEL, NI
LO SERÉ HASTA QUE MUERA;
SERÉ YO MISMA.
CHARLOTTE BRONTË

ԵԿԱՏԵՐԻՆԱ II

ԿԱՅՍՐՈՒՀԻ

Ժամանակին մի թագուհի կար, որն արհամարհանքով էր վերաբերվում իր ամուսնուն: Նրա անունը Եկատերինա էր, իսկ ամուսինը՝ Պետրոսը, Ռուսաստանի կայսրն էր: Ռուսները կայսրին չար ու ամբարտավան էին համարում: Եկատերինան գիտեր, որ ինքը իր երկրի համար ավելի լավ կառավարիչ կլինի: Նրան անհրաժեշտ էր միայն գտնել ամուսնուն փոխարինելու միջոցը: Կայսր դառնալուց վեց ամիս անց Պետրոսը արձակուրդ վերցրեց և հեռացավ առանց Եկատերինայի: Դա շատ լավ հնարավորություն էր: Թագուհին ոգեշնչող ելույթ ունեցավ արքայական զինվորների առջև և համոզեց նրանց կանգնել իր կողքին: Նրանք դադարեցին հավատարիմ մնալ Պետրոսին՝ Եկատերինային հավատարիմ լինելու համար, և մի քահանա նրան նշանակեց Ռուսաստանի նոր տիրակալ: Շատ չանցած՝ նրան համապատասխան մի հոյակապ թագ պատրաստվեց: Որպես կայսրուհի՝ Եկատերինայի տված առաջին հրամաններից մեկը ամուսնուն ձերբակալելն ու բանտարկելն էր: Եկատերինայի հոյակապ թագի ոսկերիչներից պահանջվեց երկու ամիս այն ամբողջովին ավարտելու համար: Այն պատրաստված էր ոսկուց և արծաթից և ուներ 4936 ադամանդ, յոթանասունհինգ մարգարիտ և վերևում հսկայական ռուբին: Իր գահակալության ընթացքում Եկատիրինան ընդարձակեց Ռուսական կայսրությունը՝ հաղթելով մի քանի պատերազմներ և մի շարք ապստամբություններ կազմակերպելով: Շատերը նախանձում էին նրա՝ այդքան հզոր կին լինելուն: Նրանք սարսափելի բաներ էին ասում կայսրուհու թիկունքումդեռ կենդանության օրոք: Այսպիսով, Եկատերինան մահացավ իր անկողնում և թաղվեց Սանկտ Պետերբուրգի Սուրբ Պետրոս և Սուրբ Պողոս տաճարներում գտնվող շքեղ ոսկե գերեզմանում:

1729թ.-ի ՄԱՅԻՍԻ 2 - 1796թ.-ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 17

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ILUSTRACIÓN DE
MARIJKE BUURLAGE
SOY UNA DE ESAS
PERSONAS QUE ADORA
EL PORQUÉ DE LAS COSAS.
CATALINA LA GRANDE

ՉՈԼԻՏԱՆԵՐՈՎ ԼԵՌՆԱԳՆԱՑՈՒՀԻՆԵՐԸ

ԱԼՊԻՆԻՍՏՆԵՐ

Ժամանակին մի կին կար՝ Լիդիա Հուայլաս անունով, որն ապրում էր Բոլիվիայի մի գեղեցիկ լեռան ստորոտում: Իրենց ամբողջ կյանքի ընթացքում Լիդիան և նրա ընկերները կերակուր էին պատրաստում լեռնագնացների համար՝ մինչ վերջինները ճամբարը կլքեին և լեռը կբարձրանային: Լիդիան հետևում էր, որ նրանք սաղավարտները դնեն, ուսապարկը հարմարեցնեն, կոշիկները լավ կապեն և ջրի շշերը լցնեն: Ճամփորդությունից առաջ նկատում էր նրանց հուզմունքը: Լիդիան և մյուս կանայք չգիտեին, թե ինչ զգացողություն է լեռան գագաթին հայտնվելը: Սակայն նրանց ամուսիններն ու որդիները լավ գիտեին: Նրանք աշխատում էին որպես լեռնագնացների ուղեկիցներ և բեռնակիրներ, ալպինիստների խմբերին անվտանգ վերև էին տանում և հետ ուղեկցում, մինչ կանայք մնում էին դաշտում, ձորում: Մի օր Լիդիան ասաց իր ընկերներին.

- Եկեք բարձրանանք լեռը և այն մեր աչքերով տեսնենք:

Մինչ կանայք հագնում էին մագլցման համար նախատեսված կոշիկներն իրենց բնորոշ գույնզգույն կիսաշրջազգեստների տակից, որոնք չոլիտաների բաղադրիչ են, տղամարդիկ ծաղրում էին նրանց.

-Չեն կարող չոլիտաներով բարձրանալ, – ասում էին նրանք,- պետք է մագլցման համար նախատեսված հագուստ ունենան լեռ բարձրանալու համար:

-Անհեթեթությո՛ւն, – ասաց Լիդիան՝ կապելով սաղավարտը,- մենք կարող ենք հագնել այն, ինչ ուզում ենք: Մենք չոլիտաներով ալպինիստներն ենք:

Չնայած ուժեղ ձնաբքին՝ Լիդիան և նրա ընկերները հաղթահարում էին բարձունքից բարձունք:

-Մենք ուժեղ ենք: Մենք ուզում ենք բարձրանալ ութ լեռ, – ասում էին նրանք:

Հավանաբար, երբ կարդում եք նրանց պատմությունը, նրանք նույն ժամանակ բարձրանում են ձյան միջով, ՝ ոգևորված՝ տեսնելու աշխարհը այլ գագաթից, մինչդեռ քամին ցնցում է նրանց գույնզգույն կիսաշրջազգեստները:

ՄՈՏ 1968Թ.

ԲՈԼԻՎԻԱ



ESTAR EN LA CIMA ES MARAVILLOSO.
ES OTRO MUNDO.
LIDIA HUAYLLAS

ԿԼԵՈՊԱՏՐԱ

ՓԱՐԱՎՈՆՈՒՀԻ

Շա՛տ վաղուց, Հին Եգիպտոսում, երբ փարավոնը մահացավ, թագավորությունը թողեց իր տասնամյա որդու՝ Պտղոմեոս XIII-ի, և իր տասնութ տարեկան դստեր՝ Կլեոպատրայի ձեռքում: Նրանք շատ տարբեր տեսակետներ ունեին երկիրը ղեկավարելու վերաբերյալ, այնքան, որ Կլեոպատրային վտարեցին պալատից, և զարգացավ քաղաքացիական պատերազմ:
Հռոմի կայսր Հուլիոս Կեսարը ուղևորվեց Եգիպտոս, որպեսզի օգնի Կլեոպատրային և Պտղոմեոսին՝ համաձայնության գալու:
«Եթե միայն ես կարողանայի հանդիպել Կեսարին մինչ եղբորս հանդիպելը, — մտածեց Կլեոպատրան, — ես կկարողանայի ապացուցել նրան, որ իրենից ավելի լավ փարավոն եմ»: Սակայն, նրան վտարել էին պալատից, և նրան արգելված էր թագավորություն մտնել: Ուստի Կլեոպատրան իր ծառաներից մեկին խնդրեց գորգի մեջ իրեն փաթաթել և թաքցնել Կեսարի սենյակում: Վերջինս, ապշած Կլեոպատրայի համարձակությունից, օգնեց նրան վերադառնալ գահին:
Կարճ ժամանակում նրանք ամուսնացան և ունեցան որդի: Կլեոպատրան նրա հետ տեղափոխվեց Հռոմ, բայց Հուլիոս Կեսարը սպանվեց, այդպիսով նա ստիպված էր վերադառնալ Եգիպտոս:

Հռոմեական նոր կայսրը՝ Մարկոս Անտոնիոն, շատ էր լսել եգիպտական համարձակ թագուհու մասին և ցանկանում էր հանդիպել նրան:

Կլեոպատրան այս անգամ եկավ ոսկե նավով՝ պատված թանկարժեք քարերով և մետաքսե ծածկոցներով:

Դա սեր էր առաջին իսկ հայացքից:

Իրենց հանդիպման օրից Կլեոպատրան և Մարկոս Անտոնիոն անբաժան էին:

Նրանք ունեցան երեք երեխա, և սիրեցին միմյանց մինչև իրենց կյանքի վերջին օրերը:

Երբ Կլեոպատրան մահացավ, Եգիպտական կայսրությունը քանդվեց: Նա Հին Եգիպտոսի վերջին փարավոնուհին էր:

ՄՈՏ Մ.Թ.Ա. 69Թ. - Մ.Թ.Ա. 30Թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 12

ԵԳԻՊՏՈՍ


ILUSTRACIÓN DE
KIKI LJUNG
NO ME
VENCERÁN.
CLEOPATRA

ԿՈՌԱ ԿՈՌԱԼԻՆԱ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ԵՎ ՀՐՈՒՇԱԿԱԳՈՐԾ

Ժամանակին կար մի փոքրիկ աղջիկ՝ Կոռա անունով, որ ապրում էր կամրջի վրա գտնվող մի տանը և գիտեր, որ ինքը ծնվել է բանաստեղծ լինելու համար:

Սակայն նրա ընտանիքը համաձայն չէր: Նրանք չէին ցանկանում, որ Կոռան գիրք կարդա, ոչ էլ ուզում էին նրան ուղարկել ավագ դպրոց: Նրանք հավատում էին, որ Կոռայի պարտականությունը լավ ամուսին գտնելն ու ընտանիք կազմելն է:

Երբ Կոռան մեծացավ, սիրահարվեց մի տղամարդու և նրա հետ էլ ամուսնացավ: Նրանք տեղափոխվեցին մեծ քաղաք, և ունեցան չորս երեխա: Կոռան զբաղվում էր ամեն տեսակի աշխատանքով , որ իր երեխաները կարողանան դպրոց գնալ:

Կոռայի կյանքը լեցուն էր, բայց նա երբեք չէր մոռանում, որ ծնվել է բանաստեղծ լինելու համար: Ուստի ամեն օր նա նստում էր ստեղծագործելու:

Վաթսուն տարեկան հասակում նա վերադառնում է՝ կամրջի տանն ապրելու: Որոշել էր, որ ճիշտ ժամանակն է սկսելու բանաստեղծական իր կարիերան: Դեռևս փողի կարիք ունենալով՝ նա սկսեց տորթեր թխել և իր բանաստեղծությունների հետ միասին վաճառել:

Այլ բանաստեղծներ և գրողներ սկսեցին գովերգել Կոռայի պոեզիան: Նա շահեց մրցանակներ ու մեդալներ, իսկ երբ 75 տարեկան էր, հրատարակեց իր առաջին գիրքը:

Լրագրողները ամբողջ աշխարհից այցելել էին նրան՝ հարցազրույց վերցնելու համար:

Երբ նրանք հեռանում էին, Կոռան վերադառնում էր իր սեղան մոտ և շարունակում էր գրել՝ շրջապատված տորթերի, բլիթների և խմորեղենի նուրբ բույրերով:

1889թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 20 - 1985թ.-Ի ԱՊՐԻԼԻ 10

ԲՐԱԶԻԼԻԱ

YO SOY AQUELLA MUJER
QUE ESCALÓ LA MONTAÑA
DE LA VIDA, REMOVIENDO
PIEDRAS Y PLANTANDO FLORES.
CORA CORALINA
ILUSTRACIÓN DE
ELENIA BERETTA

ՖՐԻԴԱ ԿԱԼՈ

ՆԿԱՐՉՈՒՀԻ

Ժամանակին Ֆրիդա անունով մի աղջիկ կար, որը ապրում էր Մեխիկոյում՝ մի պայծառ կապույտ տանը: Մեծանալով նա կդառնար 20-րդ դարի աշխարհի ամենահայտնի նկարիչներից մեկը, չնայած տարբեր պատճառներով չափահաս չդառնալու եզրին էր: Երբ նա վեց տարեկան էր, համարյա մեռնում էր պոլիոմելիտից: Հիվանդությունը նրան կաղ թողեց, բայց դա չէր խանգարում նրան խաղալ, լողալ ու կռվել ինչպես մնացած երեխաները: Այնուհետև, տասնութ տարեկան հասակում, ավտոբուսը, որով երթևեկում էր Ֆրիդան, սարսափելի վթարի ենթարկվեց: Դրա պատճառով ևս մեկ անգամ մահվան եզրին էր: Եվ կրկին նա մի քանի ամիս անցկացրեց անկողնում: Նրա մայրը տեղադրեց հատուկ մոլբերտ, որպեսզի նա կարողանա պառկած նկարել, քանի որ Ֆրիդան սիրում էր նկարել ավելի, քան աշխարհում ցանկացած այլ բան: Հենց նա կարողացավ նորից քայլել, այցելեց Մեքսիկայի ամենահայտնի նկարիչին՝ Դիեգո Ռիվերային:

-Կարծում ես՝ իմ նկարները լա՞վն են,- հարցրեց նրան:

Նրա նկարները զարմանալի էին , համարձակ, պայծառ ու գեղեցիկ: Դիեգոն սիրահարվեց Ֆրիդայի նկարներին, իսկ հետո՝ նաև նրան:

Դիեգոն և Ֆրիդան ամուսնացան: Նա բարձրահասակ և ուժեղ տղամարդ էր, որ լայնեզր գլխարկ էր դնում: Կինը նրա կողքին փոքրիկ էր թվում, այդ պատճառով մարդիկ նրանց «փիղ ու աղավնի» էին անվանում:

Ֆրիդան իր կյանքի ընթացքում նկարել է հարյուրավոր գեղեցիկ ինքնադիմանկարներ, որոնցում ինքը շրջապատված է թռչուններով և կենդանիներով, որոնց պահում էր որպես ընտանի կենդանիներ: Կապույտ, պայծառ տունը, որտեղ նա ապրում էր, շարունակում է գոյություն ունենալ ճիշտ այնպես, ինչպես նա թողեց այն՝ լի գույնով, ուրախությամբ և ծաղիկներով:

1907Թ.-Ի ՀՈՒԼԻՍԻ 6 - 1954Թ.-Ի ՀՈՒԼԻՍԻ 13

ՄԵՔՍԻԿԱ


ILUSTRACIÓN DE
HELENA MORAIS SOARES
PIES, ¿PARA QUÉ LOS QUIERO
SI TENGO ALAS PARA VOLAR?
FRIDA KAHLO

ԳՐԵՅՍ ՕՄԵԼԼԻ

ԾՈՎԱՀԵՆՈՒՀԻ

Շատ տարիներ առաջ՝ փոքրիկ անտառածածկ կղզում ապրում էր Գրեյս անունով, երկար մազերով , կարմրահեր մի աղջիկ:

Երբ քամին փչում էր, և ալիքները բախվում էին քարերին, Գրեյսը կանգնում էր ժայռի գագաթին և երազում էր նավարկել բուռն ծովերով:

«Կանայք չեն կարող նավաստիներ լինել», – ասաց նրան հայրը: Բացի այդ, ձեր երկար մազերը կարող են խճճվել լարերի մեջ:

Գրեյսը համաձայն չէր: Նա կտրեց իր մազերը և հագավ տղայի հագուստ՝ իր ընտանիքին ցույց տալու համար, որ կարող է ապրել ծովային կյանքով: Վերջապես, մի օր նրա հայրը համաձայնեց տանել նրան շրջագայության, բայց մի պայմանով:

«Եթե մենք բախվենք ծովահենական նավի, դու կթաքնվես տախտակամածի ետևում»:

Սակայն, երբ նրանց վրա հարձակվեցին, Գրեյսը ցատկեց պարանով և ընկավ ծովահեններից մեկի մեջքին: Նրա անակնկալ գրոհը արդյունք տվեց, և դրա շնորհիվ նրանք հաղթեցին ծովահեններին:

Գրեյսը գերազանց նավաստի էր, բայց նա ցանկանում էր ավելի հետաքրքիր բանով զբաղվել, քան պարզապես ձկնորսությունն է: Երբ անգլիացիները հարձակվեցին նրա ամրոցի վրա, նա նախընտրեց ծովահեն դառնալ, քան ենթարկվել անգլիական ռեժիմին: Գրեյսն այնքան հաջողակ էր, որ շուտով ունեցավ իր սեփական նավատորմը, ինչպես նաև մի քանի կղզիներ և դղյակներ Իռլանդիայի արևմտյան ափին:

Երբ անգլիացիները առևանգեցին նրա երեխաներին, Գրեյսը գնաց հանդիպման Անգլիայի թագուհի Ելիսաբեթ I- ի հետ: Ի զարմանս բոլորի՝ թագուհին ու Գրեյսը ընկերացան: Թագուհին Գրեյսին վերադարձրեց երեխաներին և ունեցվածքը, իսկ Գրեյսը օգնեց նրան պայքարել իսպանացիների դեմ, որոնք այդ ժամանակ թշնամի էին անգլիացիների համար:

ՄՈՏ 1530Թ. - 1603Թ.

ԻՌԼԱՆԴԻԱ


ILUSTRACIÓN DE
KATHRIN HONESTA
SOY LA REINA DE LOS MARES.
GRACE O'MALLEY

ՀԻՊԱՏԻԱ

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱ

Շատ տարիներ առաջ հին եգիպտական Ալեքսանդրիա քաղաքում կար մի հսկայական գրադարան: Այն աշխարհի ամենամեծ գրադարանն էր, բայց ներսում չկային ո՛չ գրքեր, ո՛չ էլ թղթեր: Մարդիկ գրում էին պապիրուսների վրա (որոնք պատրաստված էին բույսի տերևներից), և փաթաթում էին մագաղաթների մեջ, այսօրվա գրքերի նմանն ունենալու փոխարեն: Այդ հինավուրց գրադարանում պահվում էին հազարավոր մագաղաթներ, որոնցից յուրաքանչյունը գրվել էի ձեռագիր և պահվել դարակում:
Ալեքսանդրիայի գրադարանում հայր և աղջիկ մագաղաթներ էին ուսումնասիրում: Նրանց սիրած թեմաներն էին փիլիսոփայությունը, մաթեմատիկան և գիտությունը: Այդ հոր և աղջկա անուններն էին՝ Թեոն և Հիպատիա:
Հիպատիան հավասարումներ լուծեց և առաջարկեց երկրաչափական և թվաբանական տեսություններ: Նրան այնքան էր դուր գալիս սովորելը, որ կարճ ժամանակ անց նա սկսեց գրել իր գրքերը (ավելի ճիշտ՝ մագաղաթները): Նա ստեղծց մի գործիք, որը կոչեց աստրոլաբ, այն ծառայում էր արևի, լուսնի և աստղերի դիրքը ցանկացած պահի հաշվարկելու համար:
Հիպատիան դասավանդում էր աստղագիտության այնպիսի հայտնի դասեր, որ աշակերտները և ուսուցիչները նստում էին կողքին՝ լսելու նրա խոսքը: Հիպատիան հրաժարվում էր կրել կանաց ավանդական հագուստ և իր դասերն դասավանդում էր con túnica, ինչպես մնացած ուսուցիչները: Ցավոք, երբ այրվեց Ալեքսանդրիայի գրադարանը, Հիպատիայի բոլոր աշխատությունները կորան: Այնուամենայնիվ, նրա աշակերտները գրել էին իր և իր փայլուն գաղափարների մասին, և դրա շնորհիվ, մենք իմանում ենք Ալեքսանդրիայի այդ ժամանակաշրջանի մասին:

ՄՈՏ 370Թ. - 415Թ.-Ի ՄԱՐՏԻ 8

ՀՈՒՆԱՍՏԱՆ


ILUSTRACIÓN DE
RIIKKA SORMUNEN
DEFIENDE TU DERECHO
A PENSAR, PORQUE INCLUSO
PENSAR DE MANERA ERRÓNEA
ES MEJOR QUE NO PENSAR.
HIPATIA

ԷԼԻԶԱԲԵԹ I

ԹԱԳՈՒՀԻ

Վար-չկար մի թագավոր կար, ով վճռական տրամադրված էր ունենալ արու զավակ, որին կթողներ իր թագավորությունը:
Երբ նրա կինը աղջկա լույս աշխարհ բերեց, Հենրիխ VII արքան այնքան կատղած էր, թողեց իր կնոջը, երեխային ուղարկեց հեռու և ամուսնացավ մեկ այլ կնոջ հետ: Նա կարծում էր, որ իր մահից հետո միայն տղամարդ կարող է ղեկավարել երկիրը, այդ իսկ պատճառով հիանալի լուր էր այն, որ իր նոր կինը արու զավակ է լույս աշխարհ բերել՝ Էդուարդը:
Էլիզաբեթը՝ Հենրիխի դուստրը, մեծանում և դառնում է պայծառ և կենսուրախ աղջիկ, երկար և կարմիր մազերով և խիստ բնավորությամբ:
Մինչդեռ Էդուարդը ընդամենը ինը տարեկան էր, երբ մահացավ իր հայրը և նա արքա հռչակվեց: Մի քանի տարի անց նա նույնպես հիվանդացավ և մահացավ, և գահ բարձրացավ նրա ավագ քույրը՝ Մարիան: Մարիան կարծում էր, որ Էլիզաբեթը դավեր է նյութում իր դեմ, ուստի փակեց նրան Լոնդոնի աշտարակում:
Մի օր աշտարակի պահակները ներխուժեցին Էլիզաբեթի խուց.
«Թագուհին մեռա՛ծ է»,- հայտարարեցին և ծնկի իջան նրա առջև:
Էլիզաբեթը բանտարկյալից դարձավ իր երկրի նոր թագուհին:
Էլիզաբեթի արքունիքը բացեց իր դռները երաժիշտների, պոետների, նկարիչների և դրամատուրգների առջև: Նրանցից ամենահայտնին Ուիլյամ Շեքսպիրն էր, ում պիեսները Էլիզաբեթը պաշտում էր: Թագուհին մարգարիտներից և ժանյակներից պատրաստված ճոխ զգեստներ էր կրում: Նա երբեք չամուսնացավ, քանի որ իր անկախությունը գնահատում էր այնքան, որքան իր երկրի անկախությունը: Մարդիկ շատ էին սիրում նրան, և երբ նա մահացավ, լոնդոնցիները դուրս եկան փողոցներ՝ սգալու իրենց երբևէ ունեցած լավագույն թագուհու մահը:

1533թ.-ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 - 1603թ.-ի ՄԱՐՏԻ 24

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ILUSTRACIÓN DE
ANA GALVAÑ
UNA CONCIENCIA
LIMPIA E INOCENTE NO
LE TEME A NADA.
ISABEL I

ՋԵՅՆ ԳՈՒԴՈԼԼ

ՊՐԻՄԱՏՈԼՈԳ

Ժամանակին կար մի անգլիացի աղջիկ, որ սիրում էր ծառեր բարձրանալ և կարդալ գրքեր:

Նրա երազանքն էր մեկնել Աֆրիկա և ժամանակ նվիրել այդ աշխարհամասի կենդանիների ուսումնասիրմանը: Մի օր նա իր տետրով և հեռադիտակով թռավ Տանզանիա շիմպանզեներին իրենց բնական միջավայրում ուսումնասիրելու վճռականությամբ:

Սկզբում դժվար էր մոտենալ կենդանիիներին: Շիմպանզեները փախչում էին, հենց որ տեսնում էին նրան: Բայց նա ամեն օր այցելում էր նույն վայրը: Ժամանակի ընթացքում կապիկները նրան թույլ տվեցին ավելի մոտենալ:

Բայց Ջեյնի համար բավարար չէր նրանց հետ մտերմանալը: Նա ուզում էր նրանց ընկերը լինել: Այդ պատճառով ստեղծեց «բանանի ակումբ»: Ամեն անգամ, երբ նա այցելում էր շիմպանզեներին, նրանց բանան էր հյուրասիրում:

Այն ժամանակ շիմպանզեների մասին շատ քիչ բան էր հայտնի: Որոշ գիտնականներ նրանց հեռադիտակի օգնությամբ էին ուսումնասիրում, իսկ մյուսները նրանց վանդակի մեջ էին գցում՝ ավելի լավ ուսումնասիրելու համար:

Ի տարբերություն նրանց՝ Ջեյնը ժամեր ու ժամեր էր անցկացնում շիմպանզեներով շրջապատված: Փորձում էր խոսել նրանց հետ փնթփնթոցների ու ճչոցների միջոցով: Նա բարձրանում էր ծառերը և նույնը ուտում, ինչ նրանք: Հետո նա հայտնաբերեց, որ կապիկներն ունեն ծեսեր, օգտագործում են գործիքներ, և նրանց Լեզուն պարունակում է առնվազն քսան տարբեր հնչյուններ: Նա նույնիսկ հասկացավ, որ շիմպանզեները բուսակեր չեն: Մի անգամ նա փրկել է մի շիմպանզեի և հոգ էր տարել մինչև կբուժվեր: Երբ կապիկը վերադառնում էր իր բնական միջավայր, շրջվեց և երկար, սիրալիր գրկեց Ջեյնին, կարծես շնորհակալություն և ցտեսություն էր ասում:

ԾՆՎԵԼ Է 1934Թ.-Ի ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ILUSTRACIÓN DE
EMMANUELLE WALKER
SÓLO SI ENTENDEMOS,
NOS PUEDE IMPORTAR. SÓLO
SI NOS IMPORTA, PODEMOS
AYUDAR. SÓLO SI AYUDAMOS,
ELLOS SE SALVARÁN.
JANE GOODALL

ՋԻԼ ԹԵՐԹԵՐ

ԱՍՏՂԱԳԵՏ

Մի ժամանակ կար մի աղջիկ, որ երազում էր ընկերանալ աստղերի հետ: Նրա անունը Ջիլ էր:

– Ինչպե՞ս կարող ենք միայնակ լինել տիեզերքում, եթե երկինքն այդքան մեծ է – մտածում էր նա:

Չէր կարողանում դադարել դրա մասին մտածելուց, այդ պատճառով, երբ մեծացավ, որոշեց երկինքն ուսումնասիրել՝ փնտրելով այլմոլորակային կյանք: Դարձավ աստղագետ ու ՍԵՏԻ-ի ղեկավար, որը տիեզերքում կյանքի առկայության հնարավորությունը ուսումնասիրող աշխարհի առաջատար գիտական կենտրոնն է:

Տարիների ընթացքում Ջիլն ու նրա խումբն ուսումնասիրեցին աշխարհի շուրջ հարյուրավոր աստղային համակարգեր ռադիոհեռադիտակների միջոցով: Ամեն գիշեր քաղաքակրթության նշաններ էր փնտրում հեռավոր մոլորակների վրա:

Ոչ ոք չգիտեր կամ դեռ չգիտի, թե հաղորդակցության ինչ տեսակ համակարգեր կարող են օգտագործել ուրիշ մոլորակի էակները: Միայն գիտենք, որ տիեզերքը չափազանց մեծ է, որ միայն մենք լինենք նրա բնակիչները:

Ջիլը հատկապես սիրում էր իր գիշերվա զբոսանքները աստղալից երկնքի տակ:

– Սիրում էի գնալ կառավարման սենյակ՝ կեսգիշերյան իմ հերթափոխը սկսելու: Օրիոնը իմ գլխավերևում էր, ինչպես հին ընկերը, –հիշում է նա:

Հետազոտություններից ոչ մեկը այլմոլորակային կյանքի ապացույց չի գրանցել, բայց Ջիլը հույսը չի կորցնում:

– Ոչ ոք չի ասում, թե ջրում ձկներ չկան, միայն որովհետև մի բաժակ ջրում դրանք չկան, – ասում է նա:

ԾՆՎԵԼ Է 1944Թ.-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ILUSTRACIÓN DE
ZOSIA DZIERŻAWSKA
LAS IDEAS CIENTÍFICAS ILUMINAN
LOS RECOVECOS OSCUROS.
JILL TARTER

ՋՈՒԼԻԱ ՉԱՅԼԴ

ՇԵՖ ԽՈՀԱՐԱՐ

Ջուլիա Չայլդը մի բարձրահասակ երիտասարդ էր, որի հասակը մեկ մետր ութսունյոթ սմ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվելուն պես Ջուլիան որոշեց բանակ գնալ, բայց նրան մերժեցին՝ իր հասակի պատճառով: Ռազմածովային ուժերի հրամանատարական կազմը նույնպես նրան ասաց, որ նա շատ բարձրահասակ էր զինվորագրվելու համար: Ջուլիան որոշեց դառնալ հետախույզ:Նրա առաջին առաջադրանքներից մեկը պայթուցիկ սարքեր ակտիվացնելն էր: Ստորջրյա պայթուցիկները ցրված էին օվկիանոսում և ուղղված էին գերմանական սուզանավերի ուղղությամբ:Խնդիրն այն էր, որ շնաձկները դրանց շատ մոտ էին լողում և իրենք էին պայթում: Մյուս գործակալները չգիտեին ինչ անել, բայց Ջուլիան մի միտք ուներ:Այսպիսով, նա սկսեց իրագործել այն:

Ջուլիան խառնելով մի շարք տհաճ բաղադրիչներ ,բլիթներ պատրաստեց, որոնք ջուրը նետելիս ունեին սատկած շնաձկան հոտ: Շնաձկները չէին համարձակվում մոտենալ բլիթներին:Դա նման է այն բանին, երբ ցանում եք դեղ՝ միջատներից պաշտպանվելու համար . Ջուլիան դա կատարեց շնաձկների և պայթուցիկների դեպքում:
Պատերազմից հետո Ջուլիան և իր ամուսինը գնում են Ֆրանսիա՝ ամուսնու աշխատանքի պատճառով: Ջուլիան առաջին պատառից սիրահարվեց ֆրանսիական ուտելիքին:Չէի կարծում,որ ինչ-որ բան կարող է այսքան համեղ լինել: Նա սկսեց սովորել «Լե Կորդոն Բլյու»- ում, որը ամենալավ խառհարարական դպրոցն է աշխարհում: Սովորեց այն ամենը, ինչ այնտեղի խոհարարները գիտեին: Ջուլիան հեղինակություն դարձավ ֆրանսիական գաստրոնոմիայի ոլորտում, և նրա գիրքը՝ «Ֆրանսիական խոհարարության արվեստը», բեսթսելլեր դարձավ: Նա նույնիսկ ունեցավ իր սեփական հեռուստաշոուն: Նա միշտ ասում էր. -Բարի ախորժակ, եթե շնաձուկ չես:

1912Թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 15 - 2004Թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 13

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ


ILUSTRACIÓN DE
BARBARA DZIADOSZ
UNA FIESTA SIN
PASTEL NO ES
MÁS QUE UNA
MERA REUNIÓN.
JULIA CHILD

ՄԱՆԱԼ ԱԼ-ՇԱՐԻՖ

ԱԿՏԻՎԻՍՏ

Կար-չկար, մի երիտասարդ կին կար՝ Մանալ անունով, ով ուզում էր մեքենա վարել: Նա ապրում էր Սաուդյան Արաբիայում, մի երկիր, որի կրոնական նորմերը կանանց արգելում են մեքենա վարել:

Մի օր Մանալը որոշեց խախտել կանոնները:
Նա ժամանակավոր վերցրեց եղբոր մեքենան և որոշ ժամանակ քշեց քաղաքի փողոցներով:
Նա YouTube ներբեռնեց իր մասին տեսանյութը՝ ղեկի առջև, որպեսզի հնարավորինս շատ կանայք տեսնեն, թե ինչ է ինքն անում, և համարձակություն հավաքեն նույնն անելու:
— Եթե տղամարդիկ կարող են մեքենա վարել, ինչո՞ւ կանայք չեն կարող: — իր տեսանյութում ասաց Մանալը: Դա պարզ հարց էր, բայց կրոնական իշխանություններին բացարձակապես դուր չեկավ:
— Ի՞նչ կլինի, եթե այլ կանայք սկսեն մեքենա վարել: Նրանք դուրս կգան վերահսկողությունից, — բացականչեցին իշխանությունները:
Այդպիսով, մի քանի օր անց Մանալը ձերբակալվեց, և նրան ստիպեցին խոստանալ, որ այլևս երբեք մեքենա չի վարի:
Այնուամենայնիվ, նրա տեսանյութն արդեն նայել էին հազարավոր մարդիկ: Մի քանի շաբաթ անց հարյուրավոր համարձակ սաուդցի կանայք իրենց մեքենաներով դուրս եկան փողոց և ձեռնոց նետեցին կրոնական իշխանություններին:
Մանալը կրկին բանտարկվեց, բայց շարունակեց արտահայտվել՝ խրախուսելով կանանց մեքենաներ վարել և պայքարել իրենց իրավունքների համար:
— Մի՛ հարցրեք, թե երբ կավարտվի արգելքը: Պարզապես դու՛ռս եկեք և մեքենա՛ վարեք:

ԾՆՎԵԼ Է 1979Թ.-Ի ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

ILUSTRACIÓN DE
KATE PRIOR
SALGAN Y MANEJEN
MANAL AL-SHARIF

ՄԱՐԻԱ ԿԱԼԼԱՍ

ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳՉՈՒՀԻ

Մանկության տարիներին Մարիան մի քիչ անփույթ էր ու ոչ հանրահայտ: Համոզված էր, որ մայրն ավելի շատ սիրում է քրոջը, որովհետև նա ավելի նիհար էր, գեղեցիկ ու սիրված, քան ինքը:

Մի օր մայրը հայտնաբերեց, որ Մարիան զարմանալի ձայն ունի, և ոգևորեց նրան երգել՝ ընտանիքի համար գումար վաստակելու համար: Մարիայի մայրը փորձեց նրան սովորելու ուղարկել Աթենքի Ազգային կոնսերվատորիա, բայց նրան մերժեցին, քանի որ երբեք երաժշտական կրթություն չէր ստացել: Այսպիսով, ընտանիքը նրան ուղարկեց մասնավոր ուսուցչի մոտ: Առաջին անգամ, երբ ուսուցիչը լսեց նրա ձայնը, քարացավ: Դա նրա լսած ամենաանհավանական ձայնն էր: Մարիան ոչ միայն մի քանի ամսվա ընթացքում հեշտությամբ յուրացնում էր ամենադժվար արիաները, այլև նրա երգելու ոճը հուզում էր յուրաքանչյուրին: Մարիան կրկին փորձեց ընդունվել Ազգային կոնսերվատորիա, և այս անգամ ընդունվեց: Մի երեկո էլ նա իր նորամուտը նշեց աշխարհի ամենահայտնի օպերային թատրոնի բեմում՝ Միլանի Լա Սկալայում: Երբ նա երգում էր, հանդիսատեսը տարվում էր յուրաքանչյուր նոտայով՝ տեղափոխվելով մի վայր, որտեղ կար կիրք, զայրույթ, ուրախություն և սեր: Վերջում բոլորը ոտքի կանգնած բղավում էին և ծափահարում՝ բեմը ծածկելով վարդերով: Մարիան հայտնի դարձավ պարզապես որպես աստվածային, ամենահայտնի սոպրանոն պատմության մեջ:

1923թ.-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 - 1977թ.-ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16

ՀՈՒՆԱՍՏԱՆ


ILUSTRACIÓN DE
MARTA SIGNORI
SIEMPRE SERÉ TAN
DIFÍCIL COMO SEA
NECESARIO PARA
LOGRAR SER LA MEJOR.
MARÍA CALLAS

ՄԵՐԻ ԿՈՄ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ

Ժամանակին Հնդկաստանում մի աղջիկ կար՝ Մերի անունով: Մերիի ընտանիքը շատ աղքատ էր, ուտելիք չուներ սեղանին դնելու: Մերին ցանկանում էր օգնել և բարելավել իր ընտանիքի կյանքը, ուստի նա որոշեց բոնցքամարտիկ դառնալ: Մի օր նա վստահորեն մոտեցավ բոնցքամարտի մի մարզչի և հարցրեց
-Կմարզե՞ք ինձ:
-Դու չափազանց փոքր ես: Հեռացի՛ր:
Այնուամենայնիվ, երբ մարզիչն ավարտեց աշխատանքը, տեսավ, որ Մերին դեռ իրեն էր սպասում դռան մոտ:
-Ես ուզում եմ դա անել: Տարե՛ք ինձ ռինգ , — ասաց նա:

Մարզիչը դժկամորեն համաձայնեց, ուստի Մերին սկսեց մարզվել ինչպես երբեք: Հետո նա ռինգ դուրս եկավ ու շատ մենամարտերում հաղթեց: Բայց նա ծնողներին չէր ասել դրա մասին, քանի որ չէր ուզում նրանց հուզել: Այնուամենայնիվ, նրա հայրը թերթում մի հոդված կարդաց Մերիի մասին:
-Դո՞ւ ես ,-մտահոգված հարցրեց:
- Այո՛, — հպարտ պատասխանեց Մերին:
-Բա որ վնասվածք ստանա՞ս,- հարցրեց մայրը.-մենք փող չունենք բժիշկների համար:
-Ես քրտնաջան կաշխատեմ և կկուտակեմ, որքան կարող եմ: Մի՛ անհանգստացեք: Մերին քնում էր հանրակացարաններում, բանջարեղեն էր ուտում բրնձով, քանի որ փող չուներ միս ուտելու: Նա բաց էր թողնում նախաճաշը, քանի որ գումարը բավականացնում էր միայն ճաշի և ընթրիքի համար ու նա դարձավ չեմպիոն:

Ծնողները հեռուստատեսությամբ դիտում էին նրա մենամարտերը: Մերին նվաճում էր մեդալը մեդալի հետևից: Նույնիսկ Օլիմպիական խաղերում ունեցավ մեդալ: Ամբողջ համայնքը հպարտանում էր նրանով: Վերջապես Մերին կարողացավ օգնել նաև իր ընտանիքին, ինչի մասին միշտ երազում էր:

ԾՆՎԵԼ Է 1983Թ.-Ի ՄԱՐՏԻ 1-ԻՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ


ILUSTRACIÓN DE
PRIYA KURIYAN
NO PUEDO VIVIR SIN
BOXEAR. AMO EL BOXEO.
MARY KOM

ՄԻՐԻԱՄ ՄԱԿԵԲԱ

ԱԿՏԻՎԻՍՏ ԵՎ ԵՐԳՉՈՒՀԻ

Մի քանի տարի առաջ Հարավային Աֆրիկայի բնակիչներին այլ կերպ էին վերաբերվում մաշկի գույնի պատճառով: Իրականում անօրինական էր սև ու սպիտակ մարդկանց միասին ժամանակ անցկացնելը, միմյանց սիրահարվելը և երեխաներ ունենալը: Այս դաժան համակարգը կոչվում էր ապարտհեյդ: Միրիամ անունով մի փոքրիկ աղջիկ եկավ այդ աշխարհ, ով սիրում էր երգել: Ամեն կիրակի Միրիամը մոր հետ գնում էր եկեղեցի: Նա այնքան էր ցանկանում երգել երգչախմբի հետ, որ երբ որ կարողանում էր, փորձերի ժամանակ փախչում էր եկեղեցու հետնամաս:

Երբ մեծացավ, Միրիամը ձայնագրեց ավելի քան 100 երգ իր կանանց խմբի՝ Սքայլարկների համար: Իր երգերում նա պատմում էր Հարավային Աֆրիկայի կյանքի մասին, թե ինչն է նրան ուրախացրել, ինչն է տխրեցրել և ինչն է բարկացրել: Նա երգում էր պարելու և ապարտհեյդի մասին:

Մարդիկ սիրում էին նրա երգերը, հատկապես այն երգը, որը կոչվում էր «Pata pata», որն իր ամենամեծ հիթն էր: Այնուամենայնիվ կառավարությանը դուր չէր գալիս Միրիամի երգերի՝ հակաապարտհեյդի պայքարի մասին հաղորդագրությունը, ուստի նրանք ցանկանում էին լռեցնել նրա բողոքական ձայնը: Երբ Միրիամը մեկնել էր երաժշտական շրջագայության, նրանից վերցրին անձնագիրն ու թույլ չտվեցին վերադառնալ:
Միրիամը շրջեց ամբողջ աշխարհով մեկ և դարձավ աֆրիկյան հպարտության, ազատության և արդարության համար պայքարի խորհրդանիշ: Մարդիկ սկսեցին նրան անվանել Մամա Աֆրիկա: Երեսուներկու տարի անց նրան թույլ տվեցին տուն վերադառնալ: Շատ չանցած ապարտհեյդը վերջնականապես տապալվեց:

1932թ.-ի ՄԱՐՏԻ 4 - 2008թ.-ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 9

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ


ILUSTRACIÓN DE
HELENA MORAIS SOARES
TODOS SE PONEN
A BAILAR CUANDO
SUENA «PATA PATA».
MIRIAM MAKEBA

ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖ

ԳՐՈՂ

Լինում է չի լինում մի աղջիկ , ով ապրում էր Լոնդոնում և ստեղծել էր իր ընտանեկան օրագիրը: Այս աղջնակի անունը Վիրջինիա էր:
Վիրջինիան շատ ճարպիկ էր, քաղաքվարի և զգայուն: Երբ մի վատ բան էր կատարվում, նա շաբաթներ շարունակ տխուր էր: Իսկ երբ ուրախ էր, աշխարհն իրենն էր:
«Ապրում եմ ինտենսիվ», – իր օրագրում գրել էր Վիրջինիան: Վիրջինիան տառապում էր դեպրեսիայով, և տրամադրության փոփոխությունները շատ էին ազդում նրա վրա: Անկախ իր տրամադրությունից՝ նա միշտ գրում էր: Ուներ մի օրագիր, որտեղ գրում էր պոեմներ, վեպեր և գրախոսություններ:

Գրելը նրան թույլ էր տալիս արտահայտել իրսեփական զգացմունքներն ավելի հստակ՝ այս կերպ լուսավորելով մարդկային հույզերը ընդհանրապես:Մի մարդ կար սակայն , որին Վիրջինիան սիրում էր գրելու չափ: Այդ իր ամուսին Լեոնարդն էր : Վիրջինիան և Լեոնարդը անչափ երջանիկ էին միասին և խելագարի պես սիրում էին միմյանց, բայց երբեմն Վիրջինիայի դեպրեսիան փչացնում էր նրանց ուրախությունը: Այդ ժամանակ դեպրեսիայի դեմ արդյունավետ բուժման միջոց չկար, և շատերի կարծիքով այն իրական չէր:
Մեր ժամանակներում դեպրեսիան բուժում ունի: Անկախ նրանից, թե դուք ուրախ էք, տխուր կամ երկուսի մեջտեղում, դուք կարող եք օրագիր պահել,դուք կարող եք լավ գրող դառնալ Վիրջինիայի նման և օգնել մարդկանց հասկանալ իրենց էմոցիաները և ապրել իրենց երազանքներով լի կյանքը:

1882թ.-ի ՀՈՒՆՎԱՐԻ 25 - 1941թ.-ի ՄԱՐՏԻ 28

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ


ILUSTRACIÓN DE
ANA JUAN
ESTOY ENRAIZADA,
PERO FLUYO.
VIRGINIA WOOLF

ԳՐՔԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ

Աշխարհի տարբեր անկյուններից, ավելի քան վաթսուն նկարիչներ աշխատել են այս գրքի նկարազարդման վրա: Ահա նրանց անունները՝

T. S. Abe – Estados Unidos

Cristina Amodeo – Italia

Elizabeth Baddeley – Estados Unidos

Alice Barberini – Italia

Elenia Beretta – Italia

Sara Bondi – Italia

Marijke Buurlage – Países Bajos

Claudia Carieri – Italia

Édith Carron – Francia

Michelle Christensen – Estados Unidos

Jessica M. Cooper – Estados Unidos

Eleanor Davis – Estados Unidos

Barbara Dziadosz – Alemania

Zosia DzierZ'awska – Polonia

Paola Escobar – Colombia

Giulia Flamini – Italia

Ana Galvañ – España

Monica Garwood – Estados Unidos

Debora Guidi – Italia

Samidha Gunjal – India

Amanda Hall – Estados Unidos

Lea Heinrich – Alemania

Kathrin Honesta – Indonesia

Ana Juan – España

Eleni Kalorkoti – Escocia

Bijou Karman – Estados Unidos

Priya Kuriyan – India

Justine Lecouffe – Estados Unidos

Kiki Ljung – Bélgica

Marta Lorenzon – Italia

Sophia Martineck – Alemania

Sarah Mazzetti – Italia

Karabo Moletsane – Sudáfrica

Helena Morais Soares – Portugal

Sally Nixon – Estados Unidos

Martina Paukova – Eslovaquia

Camilla Perkins – Estados Unidos

Rita Petruccioli – Italia

Zara Picken – Estados Unidos

Cristina Portolano – Italia

Kate Prior – Estados Unidos

Paola Rollo – Italia

Malin Rosenqvist – Suecia

Dalila Rovazzani – Italia

Karolin Schnoor – Alemania

Marta Signori – Italia

Noa Snir – Israel

Riikka Sormunen – Finlandia

Cristina Spanò – Italia

Gaia Stella – Italia

Lizzy Stewart – Reino Unido

Elisabetta Stoinich – Italia

Geraldine Sy – Filipinas

Thandiwe Tshabalala – Sudáfrica

Eline van Dam – Países Bajos

Cari Vander Yacht – Estados Unidos

Lieke van der Vorst – Países Bajos

Emmanuelle Walker – Canadá

Sarah Wilkins – Nueva Zelanda

Ping Zhu – Estados Unidos